

ՆԱՄԱԿՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ. *)

Ե.

Երկու սեռի խառն ուսուցման մասին.

Սիրելի Սուրէն,

Վաղուց դադարել եմ քո նամակներին պատասխանել. ոչ թէ նորա համար, որ նիւթն է սպառել, այլ որ ես իմ այլ զբաղմունքներիս պատճառով անկարող էի լինում գրել անհիշ ձեռքս քո հարցասիրութեանը բաւարարութիւն տալու: Այժմ հնարաւորութիւն ունենալով շարունակել իմ գրուցատրութիւնը, խոստանում եմ հետզհետէ քո յարուցած և հասարակական բնոյթ կրող հարցերին պատասխանել և պարզել իմ տեսակէտը:

Նամակներիցդ մէկում դու գրում ես, որ այժմ մի մեծ գիւղի դպրոցի աւագ ուսուցիչ ես և ցանկանում ես երկու սեռի մանուկների ուսուցումը խառը, միացած տանել և ասում ես, որ քո տեսակէտով օգտակար է նախ՝ բարձրերի մաքրութեան և առաջադիմութեան տեսակէտից, և երկրորդ՝ դպրոցական ծախքերի կրճատման տեսակէտից և իմ կարծիքն ու խորհուրդն ես հարցնում:

Կաշխատեմ հարցասիրութեանդ բաւականութիւն տալ, սակայն երկու սեռի մանուկների խառը-կողք կողքի նստեցնելու և նոյն բանը, նոյն ծաւալով ուսուցանելու օգտակարութեան կամ վնասակարութեան մասին գրելուց առաջ անհրաժեշտ է քեզ գիտենալ թէ ի՞նչ հայեացք կայ առհասարակ իդական սեռի մտաւոր կարողութեան, ընդունակութիւնների մասին և թէ ի՞նչ հայեացք կէտներ կան կնոջ հասարակական գիրքի մասին. ուստի ես առաջ կգրեմ կնոջ դաստիարակութեան մասին առհասարակ, ապա կմասնաւորեմ երկու սեռի խառը դաստիարակութեան և ուսուցման մասին:

1 Կնոջ դաստիարակութեան մասին շատ են գրել և գրում են, սակայն իրապէս պիտի այդպիսի յատուկ խնդիր չլինէր. գոնէ չպէտք է այնպիսի սկզբունքային ձեւաւորումներ լինէին այդ հարցի

*) Այս նամակների շարքը տպւում էր «Արարատի» 4909 թուի համարներում: Տարիներ առաջ ընդհատելով ինչ ինչ պատճառներով, այժմ շարունակում ենք այն, յուսալով, որ այդ նամակների շարքը օգտակար կլինի մեր երիտասարդ ուսուցիչ ուսուցչուհիների համար: Ն. Ու.

շուրջը, ինչպէս տեսնում ենք թէ մանկավարժական և թէ հասարակագիտական գրականութեան մէջ:

Բայց նոքա, որոնք կարեւոր են համարում կնոջ դաստիարակութեան մասին խնդիրը յատուկ ուսումնասիրութեան նիւթ դարձնել, այդ անում են այն ենթադրութեամբ, որ կինը էպէս տարբեր արարած է տղամարդուց, հետեւաբար նորա համար պէտք է լինի զարգացման և դաստիարակութեան ուրոյն ձև և կարգ: Իսկ թէ ինչու՞նի է կայանում նորա առանձնայատկութիւնն ու ինչո՞ւ պէտք է նորա դաստիարակութիւնն առանձին եղանակով. ընթացման, այդ հայեցակէտը պաշտպանողները միշտ համարեալ միանման պատասխան են տալիս՝ որ կինը ի բնէ նշանակուած է մայրութեան համար, ապա ուրեմն և նա պիտի դաստիարակուի այդ ուղղութեամբ: Բայց ի՞նչպիսի դաստիարակութիւն է հարկաւոր մայրերին. ոմանք այն կարծիքի են, որ կնոջ դաստիարակութիւնը պէտք է յարաբերական լինի տղամարդու դաստիարակութեան, ինչպէս Բուսսօն է ասում, և քանի դեռ մարդիկ չեն հասել այդ սկզբունքին, նոքա շեղուած կ'լինեն նպատակից: Բայց ուրիշները գտնում են, որ բնութիւնը պարզեւել է տղամարդուն բանականութիւն, որը կնոջը շատ էլ հարկաւոր չէ նորա մայրական գործունէութեան համար, այդ պատճառով կինը ոչ միայն տարբերում է տղամարդուց, այլ նոյն իսկ սորանից ստոր է կանգնած, բանական կեանքը նորա գործը չէ, ուրեմն և կնոջ դաստիարակութիւնը դոցա տեսակէտով ստորին արարածների դաստիարակութիւն է, որի նպատակը պիտի լինի հովանաւորել բեղմնաւորութիւնը, բայց ոչ երբէք զարգացնել բանականութիւնը:

Մակայն ռի և Երբ է ապացուցել այն տեսակէտը թէ՛ կինը ըստ բանականութեան աւելի ստոր արարած է, քան տղամարդը, (թէ և պէտք է ասեմ, որ կան կին հեղինակներ, որոնք կողմնակից լինելով հանդերձ կանանց շարժման, այդպիսի միտք են յայտնում, ինչպէս օրինակ Բօգա Մայրեղիսը իւր «Կանանց առանձնայատկութեան քննադատութեան մասին» գրքում): Կնոջ հոգեբանութիւնը մեզ ցոյց է տալիս, որ կանացի բանականութիւնը տղամարդու բանականութեան հետ համեմատած ունի իւր առանձնայատկութիւնները, որ կնոջ մէջ աւելի զարգացած է դիտողական (ինտուիտիւ) մտածմունքը, քան տրամաբանականը, որ կնոջ մէջ գերակշռում է դէպի թանձրացեալ (կոնկրետ) ունեցած հետաքրքրութիւնը համեմատած վերացականի (աբստրակտ) հետ: Բայց միթէ դորանից հետեւում է, որ կինն աւելի պակաս ընդունակ է ուսման քան տղամարդը, կամ որ նորա բանականութեան այս առանձնայատկութիւնը նորան պէտք է ստոր դասի տղամարդուց. երբէք: Գուցէ այս յատկութիւնները կյանգեն այն բա-

նին, որ կինը գիտական ստեղծագործութեան մէջ յետ կմնայ տղամարդից ընդարձակ վերացական կառուցումներ ժամանակ, բայց դորանից չի հետևում, որ նոցա պէտք չէ տղամարդուն հասար գիտութիւնների մէջ կրթել:

Այժմ ման ածիր և կտեսնես, որ նոյն իսկ բարձրագոյն կրթութիւն ստացած տղամարդկանցից շատ քչերն են օգտուում իրենց ստացած գիտութիւնից վերացական գիտութիւնն առաջ տանելու համար: Իսկ եթէ իւրաքանչիւր սեռի ներկայացուցիչները գիտութիւնից օգտուում են այն չափով, ինչ չափով որ նոցա հետաքրքրութիւնն ու ընդունակութիւնը ներում է, դրանից ինչ փաստ: Ընդհակառակը, չէմ տեսակէտով, ասում է պրօֆ. Յվօստովը, որքան շատ բազմակողմանիութիւն լինի մարդկանց մէջ, «այնքան կենդանի կլինի հասարակական գործունէութիւնը, այնքան հետաքրքիր և բազմակողմանի կլինի քաղաքակրթական ւզնահատութիւնների վերամշակման գործողութիւնը»:

Եթէ նոյն իսկ ընդունենք, որ կնոջ բնական գործը սերնդի շարունակութիւնն է և նորա դաստիարակութիւնը, ապա այստեղից պիտի եզրակացնել, որ կնոջ դաստիարակութիւնը պիտի համակերպուի սերնդի շահին և ոչ թէ համակերպուի տղամարդու պահանջներին և ճաշակին: Զէ՛ որ տղամարդը և կինը հաւասարապէս այդ սերնդի անդամներն են, ուրեմն և հասարակական պահանջներն ու շահերը պէտք է անդրադառնան հաւասարապէս թէ կնոջ և թէ տղամարդու դաստիարակութեան վերայ:

Աւելի ևս այդ հայեցակէտը պաշտպանողները դժուար կացութեան մէջ կլինեն եթէ մենք հարց տանք նոցա թէ՛ իւրայատուկ դաստիարակութիւն և զարգացումն պիտի ստանայ ապագայ մայրը: Զէ՛ որ մօր համար, իսկապէս, պիտի պահանջուի, որ ամեն բան գիտենայ և ամեն բան ունենայ: Նա պէտք է միանգամայն առողջ լինի, բայց չէ՛ որ առողջութիւնը, իբրև կեանքի պահանջ, պէտք է ունենան և բոլոր տղամարդիկ, իրենց վերայ դրած պարտաւորութիւնները կատարելու համար: Ի հարկէ ի նկատի ունենալով կնոջ մարմնակազմի տարբերութիւնը տղամարդու մարմնակազմից, չպէտք է կիրառուեն այն մարմնամարդական վարժութիւնները, ինչ որ առաջարկւում է տղամարդկանց համար և ոչ էլ ամբողջովին այն առողջապահական բեժիմը, ինչ որ տղամարդկանց համար, որոնք այս կամ այն մարմնական, հոգեկան շեղումներն ունեն: Մի մարդանք որ օգտակար է առողջ տղամարդու համար, կարող է վատ հետևանք ունենալ թուրակազմի, ջղային և այլ պակասութիւններով տառապող տղամարդու համար, բայց միթէ՛ դրանից հետևցնում են երբ և իցէ, թէ մարմնամարդութիւնը փաստակար է: Հետևաբար սկզբունքային տեսա-

կէտից առողջութիւնը հրամայական պահանջ է ինչպէս կնոջ, նոյնպէս և տղամարդու համար. իսկ զորան հասնելու միջոցների տարբերութիւնը չի կարող սկզբունքը խախտելու հիմք ծառայել:

Բնաւորութեան կրթութեան վերաբերեալ պիտի տեսնուի, որ մօրից պահանջուում է ինքնագոյնացում, տոկունութիւն և առհասարակ ներքին կարգապահութիւն, բայց միթէ նոյնը չի պահանջուում և ամեն մի քաղաքակիրթ մարդուց ինչ սեռի էլ պատկանելիս լինի նա և ինչ գործով էլ զբաղուելիս լինի նա: Ուրեմն այստեղ ինչն է առանձնապէս մայրական: Թերևս կարող են առարկել, որ մայրը պէտք է ունենայ զգայուն սիրտ, հարուստ մարդասիրական հակումներով, ունակութիւն մանկական հոգու մէջ թափանցելու. այո, ճշմարիտ է, սակայն այդ յատկութիւնները ի բնէ յատուկ են կնոջը: Մենք պէտք է հոգանք, որ այդ յատկութիւնները նորա մէջ չխեղդուեն, սակայն զորա համար իւրատեսակ դաստիարակութեան պէտքը չկայ: Իսկ ինչ վերաբերում է այն պահանջին, որ բնութիւնից մանկան շնորհուած առողջ սաղմերը դաստիարակութեամբ չոչնչանան, այդ պահանջն էլ ոչ թէ միայն կնոջ յատուկ դաստիարակութիւնից, այլ առհասարակ ամեն խելացի դաստիարակութիւնից է պահանջուում:

Անցնելով մտաւոր զարգացման պէտք է ընդունենք, որ լաւ մայրը պէտք է ամեն բան գիտենայ, եթէ չի կամենում իւր զաւակներից յետ մնալ և կամենում է իւր ամուսնու իսկական ընկերը լինել: Այդ իսկ պատճառով աշխատում են կնոջը տալ հանրագիտական կրթութիւն, ծանօթութիւն և սկզբնական հասկացողութիւն բոլոր գիտութիւնների մասին. բայց միթէ նոյնը չի արւում և տղայոց ստորին և միջնակարգ դպրոցներում: Զնայելով դպրոցների տեսակներին (կլասիքական, բէալական, առետրական ևն), այնուամենայնիւ բոլոր այդ դպրոցներում տալիս են ընդհանուր զարգացում և ուսուցումը կրում է հանրագիտական բնոյթ: Իսկ ինչ վերաբերում է բարձրագոյն դպրոցին, ներկայումս, գիտութիւնների ընդարձակման շնորհիւ կարելի է այնտեղ ստանալ մասնագիտական ուսում, եթէ պահանջենք կանանց մասին հանրագիտական բարձրագոյն ուսում, նշանակում է ոչինչ չպահանջել, քանի որ անհնարին է իրագործել այդպիսի պահանջ:

Կին մայրը իւր պատասխանատու և բարդ գործը կատարելու համար անշուշտ պէտք ունի նաև բարձրագոյն կրթութեան ոչ պակաս քան տղամարդը՝ իւր պարտաւորութիւնները կատարելու համար: Բայց որովհետև բարձրագոյն ուսումը չի կարող չլինել մասնագիտական, այլապէս նա կկորցնի իւր խիստ գիտական բնոյթը, հետևաբար նա կնոջ համար էլ պիտի մնայ նոյնը: Եւ կողմնակից եմ, որ բոլոր մայրերը տիրեն մասնագիտօրէն

մանկավարժական ուսման, բայց զորանով չեմ հերքում, որ նոքա կարող են և այլ մասնաճիւղերում ևս յաջողութեամբ ուսանել։ միայն թէ նոքա ունեւան զպրօցական կանոնաւոր ուսում, իսկ անզարգացած կնոջ, նոյնպէս և տղամարդու համար ամենալաւ մանկավարժական դիրքը կամ դաստիարակութիւնը ապարդիւն կանցնի, քանի որ անկարող կլինի իւրացնել հաղորդած տեղեկութիւնները, ևս առաւել գործադրել կեանքի մէջ։

Եւ յարում եմ այն մարդկանց տեսակէտին, որոնք ընդունում են կնոջ կրթութիւնն ու զարգացումը համահաւասար տղամարդկանց հետ։ Պէտք է կրթել մարդու անձը և ոչ սեռը, և ոչ մի հիմք չկայ, երբ մենք խօսում ենք տղամարդու կրթութեան մասին, ի նկատի ունենալով նրա մարդկային արժանիքները, իսկ երբ խօսում ենք կնոջ կրթութեան մասին, ի նկատի ունենալ և հաշուի առնել ամենից առաջ նորա սեռը։

Կինը նոյնպիսի մարդկային անհատ է, ինչպէս և տղամարդը, և պէտք է ստանայ նոյն կրթութիւնն ու զարգացումը, ինչ որ մենք անհրաժեշտ ենք համարում մարդկային արժանապատուութեան տեսակէտից։ Ի հարկէ, ինչպէս վերն ասացի, ֆիզիքական կրթութեան ժամանակ ի նկատի պիտի առնել տղայի և աղջկայ մարմնակազմի տարբերութիւնը, նոյնպէս և բարոյական կրթութեան ժամանակ պէտք է աչքի առաջ ունենալ նոցա բնատրութեան առանձնայատուկ գծերը։ Պարապմունքների դասաւանդման ժամանակ էլ պէտք է աչքի առաջ ունենալ մէկ և միւս սեռի հոգեկան զարգացման ընթացքը, որ տարբեր է տարբեր հասակում և պարբերական ժամանակաշրջանում։ Սակայն սոքա գործադրութեան, տիկնիքական խնդիրներ են և ոչ սկզբունքային։

Եւ մեծ նշանակութիւն եմ տալիս այն խնդրին, որ վերաբերում է զպրօցական ծրագրին, ըստ իս, ծրագիր կազմելիս անշուշտ ի նկատի պիտի ունենալ ուրիշ կարգ աղջիկների համար, քան տղայոց։ Թէև այս մասը քեզ չի վերաբերում, դու իբրև ուսուցիչ կամ մի զպրօցի ղեկավար պարտաւոր ես եղած ծրագրով առաջնորդուել և ոչ քո ցանկութեամբ կամ քո գիտցածով (թէ կուզայդ ուղիղ էլ լինի) ծրագրի մէջ փոփոխութիւն մտցնել, ինչպէս այդ նկատուում է դժբաղդաբար մեր մի քանի զպրօցներում, սակայն լաւ է քեզ իմանալ և հետեւել, ուսումնասիրել այս խնդիրը, թերևս դու կկարողանաս քո գիտողութիւնները փաստերով լսելի անել վարիչ մարմիններին և նոցա ուշադրութիւնը հրաւիրել այս կարևոր խնդրի վերայ։—

Բանը նորանումն է, որ հասակի շրջանները զարգացման տեսակէտից աղջկայ և տղայի համար նոյն տարիներում չեն լինում և այն թափով չի լինում տղաներինը, ինչպէս աղջիկներինն է։

Շատ իրաւացի կերպով նկատում է պրօֆ. Յվոստոյւր, որ աղջիկների համար յատկապէս կրիտիքական է այն հասակը, երբ նոքա լինում են երրորդ կամ չորրորդ դասարանում (իսկ մեղանում՝ երկրորդ դասարանում). այդ հասակում (12—13 տ.) նոցա ուժերը թուլանում են սեռական հասունութեան մօտենալու շնորհիւ, մինչ գեռ դպրոցական ծրագրով հէնց այդ դասարաններումն է, որ երեխաները ծանրաբեռնւում են զբաղմունքներով նորանոր առարկաների ներմուծմամբ: Հետեաբար այն տեղերում, ուր օրիորդաց դպրոցներն առանձին են, առարկաների ըստ դասարանների բաշխման և ծաւալի վերաբերութեամբ պէտք է այդ հանգամանքն ի նկատի ունենան:

Այսքանը բաւական համարելով կանանց ընդհանուր կրթութեան մասին, այժմ գամ քեզ հետաքրքրող հարցին— խառը երկու սեռի միասին ուսուցման խնդրին:

II Պատն ուսուցումը գործադրութիւն է գտել համարեա բոլոր քաղաքակիրթ երկրներում և մեղանում էլ բաւական լայն ծաւալ է ստացել, թէև՝ այդ չի եղել առանց աղմուկի և տարաձայնութիւնների. ես յիշում եմ, երբ առաջին անգամ (25 տարի առաջ) մի գաւառական փոքրիկ քաղաքում ինձ մէջ միտք յղացաւ տղաներին և աղջիկներին խառն նստեցնել, իմ ընկեր ուսուցիչներից ոմանք ծանր և պատասխանատու գործ համարեցին այդ և թեմական իշխանութիւնը մեծ դժուարութեամբ և իմ պատասխանատւութեամբ թոյլատրեց այդ փորձն անել, ես այն ժամանակ չգիտէի, թէ խառը ուսուցումն ինչ մեծ դժուարութիւնների հետ է կապուած, բայց ես գիտակցում էի, որ դա ցածր դասարաններում հնարաւոր է և օգտակար:

Տարրական դպրոցում մենք գործ ունենք այն հասակի երեխաների հետ, որոնք սեռական շատ թոյլ և անգիտակցական աստիճանումն են գտնւում. և այստեղ դասաւանդման անհատականացումը դժուար չի լինիլ, եթէ տղայ և աղջիկ միասին սովորեն, մանաւանդ, որ այստեղ աւանդւում են ամենատարրական առարկաները. բայց նոյնը չի կարելի ասել միջնակարգ դպրոցների վերաբերութեամբ, ուր երեխաները (թէ տղաները և թէ աղջիկներն) աւելի որոշ հասունութեան և կերպաւորման են հասնում:

Ինչպէս վերն ասացի, զարգացման թափը տղաների և աղջիկների միաժամանակ չեն զուգադիպում, որ հասակի շրջանները նոցա համար լինում են տարբեր ժամանակ, որ աղջկայ զարգացման վերայ հասակի անցումն արտայայտւում է աւելի մեծ ուժով, քան տղաների զարգացման վերայ: Այս պայմաններում երեխաներին սովորեցնել միևնոյն ծրագրով, դասաւանդելի առարկաների ըստ դասարանների նոյնպիսի դասաբաշխութեամբ, ըստ իս, վտանգաւոր է:

Խառը տղաների և աղջիկների միասին սովորելը ունի այն առաւելութիւնը, որ նոքա միասին խառը սովորելով ամենափոքր հասակից այնպէս կընտելանան միմեանց, ինչպէս եղբայրները ընտելանում են քոյրերին և փոխադարձաբար հանգիստ տրամադրութեամբ կանցնեն սեռական հասունութեան հասակը, քան եթէ նոքա առանձին և բաժան սովորէին: Բայց միասին ուսուցման հակառակորդները այդ պատճառաբանութեան ուժը թուլացնում են նորանով, որ ընդհակառակը վախենում են չլինի՞ թէ դորանով ուժեղացնեն սիրաբանութիւնը (էրոտիզմ) և այն, դպրոցական պատերի մէջ, ինձ թւում է թէ երկու հոսանքն էլ իրաւունք ունեն պնդելու. ամեն ինչ կախուած է որոշ պայմաններից: Եթէ խառն ուսուցման կարգը իրապէս տարւում է այն ձևով, որ միեւնոյն երեխաները ստորին դասարաններից բարձրանում են բարձր դասարաններ, եթէ դորա հետ միասին նաև արտաքոյ դպրոցի ժամանակ էլ նոյն պայմաններում են լինում, որ նոցա չի տրամադրում սիրաբանութեան, եթէ ծնողները միանգամայն համերաշխ տրամադրութիւն ունեն դէպի դպրոցական կարգերը, եթէ նոցա ընտանեկան բարոյականը մաքուր է, ապա միասին ուսուցումը եթէ դպրոցում դաստիարակչական մասը կանոնաւոր է գրուած, կարող է տալ լաւ հետեանքներ: Բայց եթէ հնարաւորութիւն ունեն բարձր դասարաններ մտնել նոր աշակերտներ կամ աշակերտուհիներ, որոնց բարոյական հակումները յայտնի չեն, եթէ ծնողները անկարող են միշտ պահպանել երեխաների մէջ դպրոցի պատուաւատած ոգին, ապա խառը ուսուցումը կարող է ստեղծել շատ բարեխաջող պայման սիրաբանական տրամադրութեան համար հէնց դպրոցի մէջ:

Գերմանական յայտնի մտնկավարժ Յիգլերն ասում է. եթէ պէտք է խօսել խառն ուսուցման մասին միջնակարգ դպրոցներում, ապա յամենայն դէպս ոչ մեծ քաղաքներում, այլ միմիայն գիւղերում կամ գաւառական փոքրիկ քաղաքներում, ուր բնակիչների ամբողջ կեանքն անցնում է ամենքի աչքի առաջ և ուր ծնողները շատ աւելի մօտ են կանգնած թէ միմեանց և թէ դպրոցին, քան մեծ քաղաքների կենդրոններում: Փոքրիկ քաղաքներում խառը դպրոցները նոյն իսկ ցանկալի են հասարակ, տնտեսական խնայողութեան տեսակէտից: Բայց այդ դէպքում էլ անհրաժեշտ պայման պէտք է լինի, որ երեխաներն միասին սկսեն ուսումը շատ փոքր հասակից, իսկ բարձր դասարաններ նոր երեխաների ընդունելութիւնը կամ խալառ արգելուի, կամ կատարուի մեծ զգուշութեամբ: Մանկավարժները, որոնք յանձն են առնում կեանքի մէջ՝ դորձադրել խառն ուսուցումը, պէտք է միշտ մտաբերեն, որ նոքա վերցնում են իրենց վերայ մեծ պատասխանա-

տուութիւն և վտանգաւոր գործ:

Նոյնպիսի կարծիք է յայտնում մի այլ հեղինակ—Պուարսոն. «Մենք կարծում ենք, որ դաստիարակութեան բոլոր ձևերից լաւ հասկացուած և լաւ կազմակերպուած խառը դաստիարակութեան ձևն է. բայց մենք կարծում ենք նոյնպէս, որ երբ վատ է հասկացուած և վատ է կազմակերպուած, նա կդառնայ շատ վատ, և մինչդեռ կբացուեն խառը դպրոցները, ամենագլխաւոր հոգսը պիտի դարձնել այն բանի վերայ, որ պատրաստեն տղամարդկանց և կանանց նոցա վերայ գրուելիք բարձր և նոր պարտականութիւնը կատարելու համար»:

Արդ, սիրելիս, այս բոլորից դու պիտի հետեցնես, որ ինչ մտածում ես անել, լաւ կշռադատես, ընկերներիդ հետ համերաշխ գործակցութեամբ նախապատրաստես նաև ծնողներին:

Քեզ գուցէ հեշտ է թւում այդ մասամբ այն պատճառով, որ դիւղումն ես, սակայն դու արդէն բաւական փորձառութիւն և ծանօթութիւն ունես գիւղական կենցաղի և բարքերի մասին, և շատ անարատ և մաքուր չես համարում, ապա ուրեմն բոլոր ուսուցիչներդ միասին մեծ հոգածութիւն պիտի ունենաք առաւօտները շատ վաղ դպրոցում լինել, դասամիջոցներին միշտ երեխաների հետ լինել և դորանով չբաւականանալ, այլ դպրոցից դուրս էլ աշխատել շատ յաճախ երեխաների հետ լինել, որպէսզի տան դաստիարակչութեան պակասն էլ դուք լրացրած լինէք: Յաճախ կաղմեցէք ծնողական ժողովներ, ընդհանուր բարոյագիտական և դաստիարակչական գրուցատրութիւններ ունեցէք նոցա հետ, լսեցէք նոցա դիտողութիւններն էլ, մի արհամարհէք նոցա կարծիքն ու դիտողութիւնները, որովհետեւ նոցա բերանով խօսում է ինքը կեանքը, որին անտես չպէտք է առնել:

Եթէ դու և քո ընկերները ձեր մէջ ոյժ էք զգում այս ծանր և պատասխանատու գործի մէջ ջանք չխնայել, ապա անվախ ձեռնարկեցէք, յաջողութիւն եմ ցանկանում:

Յ'գրութիւն:

Քո նախկին ուսուցիչ:

10 նոյեմբերի 1916 թ.